

15.02.2012թ.

Գ. Արծվանիստ

Տեղի ունեցավ Արծվանիստ համայնքի ընդանուր ժողով, որին մասնակցում էր համայնքի թիվ 210 բնակիչ:

Նախագահությամբ՝ համայնքի ղեկավար Ս. Օհանյան

Քարտուղարությամբ՝ աշխատակազմի քարտուղար Վ. Կարապետյան

Օրակարգ - գյուղապետարանի 2011թ-ի տարեկան հաշվետվություն կատարված աշխատանքների մասին:

Լսեցին - գյուղապետարանի կատարված աշխատանքների մեկ տարվա հաշվետվություն Ջեկուցող Ս. Օհանյան

Արտահայտվեցին - Ա. Գալստյանը, Վ. Մուրադյանը, Ռ. Ղարիբյանը, Մ. Սմբատյանը:

Ժողովին մասնակցում էր Գեղարքունիքի մարզի տարածքային վարչության պետի տեղակալ պարոն Ա. Գասպարյան:

Ելույթ ունեցողները նշեցին, որ 2011թ-ին գյուղում կատարվել է զգալի աշխատանքներ՝ բարելավել է խմելու, և ոռոգման ջրի մատակարարումը, տարվա ընթացքում մի քանի անգամ կարգավորել է ներհամայնքային ճանապարհները, ժամանակին կազմակերպվել է հացահատիկային կուլտուրաների բերքահավաքը, սեփական եկամուտները հավաքագրվել է 72%-ով:

Նշվեց նաև չլուծված հարցերի մասին, այն է՝ դեռևս համայնքի գլխավոր ճանապարհը ասվալտապատված չէ, ինչպես ակումբի այնպես էլ մանկապարտեզի շենքերը կարիք ունեն վերանորոգման, խիստ անրաժեշտություն է դարձել խմելու ջրի ջրանբարի տեղափոխման հարցի լուծումը:

Ժողովի աշխատանքները անփոփեց Ա. Գասպարյանը:

Ելնելով վերոհիշյալից ժողովը որոշեց՝

Արծվանիստի գյուղապետարանի 2011թ-ի աշխատանքային գործնությունը գնահատել բավարար:

Ժողովի նախագահ՝ ----- Ս. Օհանյան

Ժողովի քարտուղար ----- Վ. Կարապետյան

Ջ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

Արժվանիստ համայնքի ղեկավարի 2011թ-ի աշխատանքային գործնության հաշվետվություն

Հաշվետու տարին սկսվել է հունվարի 10-ից, երբ սկսվեց անասունների հաշվառումը, որը ընթացավ սահուն կերպով: Ժամանակին վիճ վարչության ներկայացվեց անասունների անփոփ տեղեկատվություն, այնուհետև բնակչության թվաքանակի հաշվետվությունը ըստ սեռա - տարիքային ցուցանիշների:

Այնուհետև գումարվեց ավագանու 2011թ-ի անդրանիկ նիստը, որտեղ քննարկվեց և հաստատվեց համայնքի բյուջեն: Հաշվետու տարում գումարվել է ավագանու 9 նիստ, որտեղ քննարկվել է համայնքին վերաբերվող տարբեր հարցեր: Քննարկվող հարցերից առանձնապես ուշագրավ են եղել բյուջեի փոփոխությունները որը ուղարկվել է արդարադատության նախարարությանը: Գումարվող նիստերի արձանագրությունները ժամանակին ուղարկվել է մարզպետարան:

Նպատակային ձևով է օգտագործվել բնակչությունից գանձվող սեփական եկամուտները, որը հավաքագրվել է 72%-ով և հիմնականում ուղղվել է խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգմանը, քանի որ այն շատ հին է և կարիք ունի անհնդատ վերականգնման:

2011թ-ին կառուցվել է մարզպետարանի կողմից հատկացված գումարով 1600մ. երկարությամբ նոր ջրագիծ, նախատեսված է գոմեր կոչվող թաղամասով խմելու ջուրը հասցնել գյուղի ավազներ կոչվող թաղամասը:

Սակայն շինարարությունը մնացել է կիսատ, որը կշարունակվի 1912թ-ին:

Եկամուտների մի մասն էլ ուղղվել է ճանապարհների վիճակի բարելավմանը և աղբահանման աշխատանքների կազմակերպմանը:

Առավել ուշադրություն է դարձվել սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն տրամադրելուն: Թվով 46 ընտանիքների ցույց է տրվել դրամական օգնություն: Ժամանակին կատարվել է քաղաքացիների ընդունակության և առաջարկվող հարցերին տրվել սպառիչ պատասխան:

Ընթացիկ տարում մեծածավալ աշխատանք է կատարվել առավելապես գյուղատնտեսության բնագավառում: Կազմակերպվեց և գործողության մեջ ներառվեց շուրջ

10 տարի անգործունեության մատնված "ավագներ," կոչվող թաղամասի ոռոգման ջրի պոմպակայանը: Դեռևս 2007 թվականին համաշխարհային բանկի կողմից հասկացված դրամաշնորհով և համայնքի 5,7 միլիոն դրամ ներդրումների հետևանքով սկսվեց «քեշան» հանդամասը ոռոգելի դարձնող պոմպակայանի շինարարությունը, որը ձգձգվեց մինչև 2011 թվականը: Նշված տարում պոմպակայանը ամբողջովին եղավ ջրածածկ Սևանի ջրերի բարձրացման հետևանքով: Միայն համայնքի ղեկավարի և գյուղապետարանի համառ ջանքերի հետևանքով սեղմ ժամկետում կառուցվեց նոր պոմպակայան և հնարավոր եղավ նրա շահագործումը հուլիս ամսին:

Շահագործման հետևանքով հնարավորություն ստեղծվեց խուսափել երաշտի անցանկանալի հետևանքներից:

Ագռտեխնիկական սեղմ ժամկետում կազմակերպվեց և ավարտին հասցվեց հացահատիկի կուլտուրայի բերքահավաքը: Համայնքում պատշաճ մակարդակի վրա է դրված աշխատանքները պաշպանության բնագավառում: 2011 թվականի գարնան և աշնան գորակոչը ընթացել է բարձր մակարդակով, գորակոչը իրականացվել է 100% արդյունքով:

Հաշվետու տարում անցկացվեց նաև համահայկական մարդահամար, անցավ անթերի, ժամանակին համարակալվեց փողոցները թվագրվեց տները, որը նպաստեց մարդահամարի անթերի անցկացմանը:

Չնայած վերն նշված աշխատանքներին համայնքում դեռևս կան բազմաթիվ չլուծված հարցեր՝ որոնցից են առավելապես խմելու ջրի ջրամբարի տեղափոխումը, քանի որ ջրամբարը արդեն գտնվում է գերեզմանոցի տարածքում, հին խողովակներից հոսող ջուրը առաջացնում է հակահամաճարակային իրավիճակ:

Դեռևս անմխիթար վիճակում է գտնվում գյուղապետարանի և մանկապարտեզի շենքերը, ասֆալտապատ չէ գլխավոր ճանապարհը, խիստ կարիք կա խմելու ջրի ներքին ցանցի փոփոխումը, չունենք փողոցային լուսավորություն: